Արձանագրություն N3

ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

03 հունիսի 2019թ.

ք. Երևան

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Բարխուդարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նազարյանը, Հ. Սիրունյանը և Է. Մխիթարյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

«ԻՐՏԻԳ» ՍՊԸ- Տեխիսկիչ Տ. Պողոսյանը
«ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ – Թիմի ղեկավար Ա. Երիցյանը
«ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ- Տնօրեն Ս. Մարգարյանը
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ- Տնօրեն Խ. Այվազյանը

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բանակցությունների մասին

Օրակարգ՝ Ջրային կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Քըրք Քըրքորյան և Այգեստան 2 թաղամասերի կոյուղագծերի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցների կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցությունների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի և հրավերի 7.7 կետի *(սույն ընթացակարգի գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա)*:

Ելույթ ունեցավ գնահատող հանձնաժողովի նախագահ Շ. Բարխուդարյանը և հրապարակեց մասնակիցների տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները:

2. Բանակցությունների արդյունքում մասնակցների առաջարկած գների մասին

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին (31.05.2019թ. ժամը 13:00) ՋԿ-ԳՀԾՁԲ-19/1-Տ ծածկագրով մրցույթի մասնակիցների՝ «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի, «ԷՅՋԻ

ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ-ի, «ԳՈԼԴ-ՆԵԹ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից նոր գին չառաջարկվեց:

3. Բանակցությունների արդյունքում հանձնաժողովի որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց.

1. **1-ին չափաբաժնի** 1-ին տեղ զբաղեցրած մասնակից համարել «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ին:
2. **1-ին չափաբաժնի** 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից համարել «ԷՅՋԻ ՖԱԿՏՈՐ» ՍՊԸ-ին:
3. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-**4**, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Շ. Բարխուդարյան

Անդամներ _____Ս. Նազարյան

_____Վ. Օհանջանյան

_____Հ. Սիրունյան

_____Է. Մխիթարյան

Քարտուղար _____Ա. Սարգսյան